

# ՄԵԼԳՈՆԵԱՆԻ ՓԱԿՄԱՆ ԴԷՄ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ Է

այն պատճառաբանութեամբ, որ Մելգոնեանը համակիրական հաստատութիւն է եւ մաս կը կազմէ Կիպրոսի ազգային ժառանգութեան:

Բացի այս բոլորէն, Հ.Բ.Ը.Մ.-ը Մելգոնեանի տէրը չէ որ զայն ծախելու իրաւունք ունենայ: Իրեն յանձնուած պարտականութիւնը պարզապէս ու միայն զայն բանեցնելն է:

Մ.Կ.Հ.-ի փակման դէմ շարժումը չսահմանափակուեցաւ միայն հայկական շրջապատով, այլ հետզհետէ ընդարձակուելով ընդգրկեց նաեւ ուսումնական հարցերով զբաղող բազմաթիւ մասնագէտներ ու հաստատութիւններ, որոնց կարգին իր պատուոյ տեղը ունի Փարիզի Փրօ-էտուֆաւիօ-ն (Կրթասէրը), որուն մէջ գործօն մասնակցութիւն ունին ուսումնական եւ գիտական մարզի հայ եւ միջազգային բազմաթիւ հեղինակութիւններ:

Ինչպէս ծանօթ է, դատին առաջին հանգրուանը շահուած է արդէն: Երկրորդ եւ կամ յետագայ հանգրուաններով Հ.Բ.Ը.Մ.-էն պիտի առնուի նաեւ մատակարարման իրաւասութիւնը, եւ Մելգոնեանը ըստ առաջնոյն պիտի շարունակէ իր կրթական եւ ազգային առաքինութիւնը՝ դժբախտաբար եւ պարտադրաբար քանի մը տարուան ընդմիջումէ յետոյ:

Ընդհանուր պատկերը տայէ յետոյ, եթէ ակնարկ

մը նետենք Մ.Կ.Հ.-ի փակումին դէմ ծաւալած շարժումին, չենք կրնար ամբողջական գոհունակութեամբ ըսել, թէ համազգային եղաւ այդ շարժումը: Ծիշդ է որ ոտքի ելան բոլոր Մելգոնեան Սանուց Միութիւններն ու անոնց համակիր զանգուածները եւ իբրեւ կտակարար նաեւ Պոլսոյ Պատրիարքութիւնը, բայց սփիւռքահայութիւնը ամբողջութեամբ իր դիրքը չարտայայտեց: Պոլսոյ Պատրիարքութիւնը եթէ օրինաւոր հիմքի վրայ ոտքի ելաւ, մեր եկեղեցական միւս աթոռներն ու հաստատութիւնները եւս բարոյական իրաւունքն ու պարտաւորութիւնը ունին արտայայտուելու այս համազգային խնդրին մասին: Մելգոնեանը մէկ հատիկ ու համազգային ըլլալուն պատճառով հարկ է մեր բոլոր ազգային կազմակերպութիւնները, կուսակցութիւն թէ միութիւններ, արտայայտուին այդ մասին: Բոլոր արտայայտուողներն ալ առաւել կամ նուազ սաստկութեամբ կը դատապարտէին փակման որոշումը, բացի մէկ-երկու «գիւլանագիտական» կամ «մանկավարժական» մօտեցումով գրուածներէ, ուր դատապարտութեան խօսքը շատ մանուածապատ ու շքարապատուած կերպով ըսուած էր, երախայ կրթելու մեթոտով մը: Բայց անտանելի փափկանկատութիւն մըն է ասիկա, քանի որ ո՛չ յանցագործը

երախայ է եւ ոչ ալ գործուած յանցանքը՝ երախայական: Հարկ է շեշտել նաեւ, թէ դատապարտութեան արտայայտութիւնները ուղղուած էին միմիայն Հ.Բ.Ը.Մ.-ի ներկայ ղեկավարութեան, եւ ոչ ոք փորձեց կասկածի տակ առնել Հ.Բ.Ը.Մ.-ի հարիւրամեայ ազգօգուտ վաստակը:

Հետաքրքրական է նշել նաեւ, որ Հ.Բ.Ը. Միութեան այս սխալ քայլը արդարացնող գրաւոր ու հրատարակային արտայայտութիւններ չեղան, բացի սկզբնական շրջանի մէկ-երկու աննշան եւ անօգուտ փորձերէ, ինչ որ համոզումի եւ ինքնավստահութեան պակաս ցոյց կու տայ:

Եզրակացնելով, Մելգոնեանի փակման դէմ ծաւալած ազգային ու միջազգային շարժման աճող թափը եւ դատական ընթացքը հիմնաւոր լաւատեսութիւն կը ներշնչեն յուսալու, որ մօտ ապագային Մ.Կ.Հ. վերստանձնէ իր կրթական ազգանուէր ծաւալութիւնը՝ աւելի մեծ աշխարհատարածքի մը վրայ, Մերձաւոր Արեւելքէն մինչեւ Եւրոպայի Ատլանտեան ափերը: Մինչ այդ Հ.Բ.Ը. Միութեան ներկայ ղեկավարութիւնը առիթը ունի վերատեսութեան ենթարկելու իր սխալ որոշումը, յաւելուածական վարկաբեկումէ խուսափելով ինքզինքը արժանաւոր ժառանգորդը նկատելու համար միութեան բարեգործական, կրթանուէր եւ ազգաշէն անցեալին:

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

(Մոնրէալ, 18 Ապրիլ 2006)

(«ՅԱՌԱՋ», 4 Մայիս 2006)